ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենսաբանություն

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանքներում ընդգրկվող նյութի շրջանակները:
Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:
Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:
- Կարճ պատասխանով առաջադրանքները հետևյալ տեսակների են.
  * ճիշտ հաջորդականության
  * համապատասխանեցման
  * խնդիրների լուծման
  * ըստ առաջադրանքի պահանջի բոլոր ճիշտ կամ սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ: Այդ առաջադրանքներում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: **Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում:**

Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում: Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համապատասխանող բոլոր միավորները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

ԱՂՅՈՒՍԱԿ

Աղյուսակ 1

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով՝

Նմուշ 1: **Հետևյալ օրգանիզմներից ո՞րն է պատկանում աղեխորշավորներին.** (1 միավոր)

1) ակտինիան
2) էվգլենան
3) ամեոբան
4) լամինարիան

Կարճ պատասխանով՝

Նմուշ 2: **Ի՞նչ հաջորդական պրոցեսներից է կազմված մարդու շնչառությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը՝ սկսելով ներշնչման պրոցեսի սկզբից:** (1 միավոր)

1. կողոսկրերի բարձրացում
2. մթնոլորտային օդի անցում շնչափող
3. կրծքավանդակի ծավալի մեծացում ուղղաձիգ ուղղությամբ
4. գազափոխանակություն թոքերում
5. կրծքավանդակի ծավալի փոքրացում
6. արտաշնչում
7. միջկողային մկանների թուլացում
8. ստոծանու գմբեթների իջեցում
9. միջկողային մկանների կծկում

Նմուշ 3: **Մարդու արյան ո՞ր ձևավոր տարրին (նշված է աջ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանությունը:** (1 միավոր)

Բնութագիր	Ձևավոր տարր
A. չունի կայուն ձև	1. էրիթրոցիտ
B. կյանքի տևողությունը 120-130 օր է	2. լեյկոցիտ
C. պարունակում է հեմոգլոբին	3. թրոմբոցիտ
D. մասնակցում է արյան մակարդմանը	
E. ընդունակ է ակտիվորեն տեղաշարժվելու	
F. ընդունակ է ֆագոցիտոզի	
G. արյան ամենափոքր ձևավոր տարրն է	

Նմուշ 4: **2800 նուկլեոտիդներից բաղկացած ի-ՌՆԹ-ի մոլեկուլում նուկլեոտիդների 26%-ը գուանինային է, 22%-ը՝ ցիտոզինային: Գտնել ադենինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այն հատվածում, որից ստացվել է տվյալ ի-ՌՆԹ-ն:** (1 միավոր)

Նմուշ 5: **Նշել բոլոր *սխալ* պնդումները**: (1 միավոր)

1. ներեիսը պատկանում է կլոր որդերի տիպին
2. պլանարիան հերմաֆրոդիտ է
3. շնաձկների ներքին կմախքը կոճիկային է
4. սպունգների գլխուղեղը կազմված է 5 բաժիններից
5. գորտին բնորոշ է հետսաղմնային ուղղակի զարգացումը
6. մեդուզան ունի հիդրոկմախք
7. անձրևորդի արյունատար համակարգը փակ է

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Կենսաբանություն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Կիրակոսյան, Ե.Սողոյան, Հ.Աբրահամյան,
   Կենսաբանություն 7: Դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար - «Անտարես» հրատ., Երևան 2023
2. Ա. Եսայան, Ս. Պիպոյան, Լ. Հակոբյան
   Կենսաբանություն 7: Դասագիրք 7–րդ դասարանի համար - «Աստղիկ Գրատուն» հրատ., Երևան 2023
3. Ա.Ֆ. Կարապետյան, Լ.Յ. Հակոբյան, Գ.Գ. Սևոյան, Ա.Հ. Եսայան
   Կենսաբանություն 8: Դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար - «Աստղիկ Գրատուն», Երևան 2024
4. Միրզոյան Գ., Թանգամյան Տ.,Կենսաբանություն 8: Դասագիրք 8-րդ դասարանի համար - «Տիգրան ՄԵԾ», Երևան 2024
5. Միրզոյան Գ. Կենսաբանություն 9: Դասագիրք 9-րդ դասարանի համար- «Տիգրան ՄԵԾ», Երևան 2025
6. Է.Ս. Գևորգյան, Ֆ.Դ. Դանիելյան, Ա.Հ.Եսայան, Գ.Գ.Սևոյան
   Կենսաբանություն 10, /բնագիտամաթեմատիկական և ընդհանքուր հոսքերի համար/ վերահրատարակություն, «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ», Երևան 2017
7. Է.Ս. Գևորգյան, Ֆ.Դ. Դանիելյան, Ա.Հ.Եսայան, Գ.Գ.Սևոյան
   Կենսաբանություն 11, /բնագիտամաթեմատիկական և ընդհանքուր հոսքերի համար/ վերահրատարակություն, «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ», Երևան 2023
8. Է.Ս. Գևորգյան, Ֆ.Դ. Դանիելյան, Ա.Հ.Եսայան, Գ.Գ.Սևոյան
   Կենսաբանություն 12, /բնագիտամաթեմատիկական և ընդհանքուր հոսքերի համար/ վերահրատարակություն, «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ», Երևան 2023

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: